նադարեան հասարակութիւնը, այն է արքայական իշխանութիւնը, նորա արդարադատութիւնը, ասպետութիւնը, մենամարտութիւնով դատ վճռելը, կուսակրոնների կարգերը, վերջապէս նոյն ինքը Հռոմի պապը, ծաղրի ու խայտառակութեան է ենթարկւում։ Բոլորին լաղթում է խորամանկութիւնը և քաղաքագիտութիւնը, որը մարմնացած է աղէսի մէջ։ «Ռէյնեկէ Աղէսը» վկայում է ֆէօդալական աշխարհի լուծելը իւր իրաւունքներով ու հիմնարկութիւններով և նոր բուրժուազիայի դարեշրջանի սկսելը, երբ արքայական իշխանութեան և քաղաքային համայնքների միացած ճիգերով՝ հարուած հասցրեց միջնադարեան ֆէօդալիզմին, մի հարուած, որից լետոյ նա այլ ևս չը կարողացաւ ոտի կանգնել»։ (Средневѣковая литература, лекціи професора Н. И. Сторофенко).

Շմիդտը, ինչպէս վերև նկատեցի, պատմում է նոյն նիւթի մասին և նա պատմում է հետաքրքիր կերպով, բայց նրա պատմութիւնը ազատ չէ մի քանի նշանաւոր պակասութիւններից. ամենից առաջ Շմիդտի «Ռէյնեկէի» մէջ բացակայում են միջնադարեան տիպերից չատերը, այստեղ խօսք չը կայ ոչ Հռոմի պապի, միջնադարեան այս նշանաւոր հիմնարկութեան մասին, ոչ հոգևորականների, ոչ ասպետութեան մասին և երկրորդ՝ միւս տիպերը, եթէ դուրս էլ են բերուած, այդ արուած է այնքան անորոշ ու թոյլ գծերով, որ անկարելի է զուշակել, թէ որ դասակարգի ներկայացուցիչ է այս կամ այն կենդանին։ Միակը, որ պարզ է դուրս բերուած, դա միջնադարեան արդարադատութիւնն է, երբ չաղթող էր հանդիսանում ոչ թէ արդարը, այլ ճարպիկը։

B.

«ԹՈՄԱՍ ԲՈՑԱՐԻՍ» (ճշգրիտ անցք), թարգմանութիւն Մոսկւա, տպ. Բարխուդարեանի, 1891 թ., 32 երես, գինն է 3 կոպ.։

Գործողութիւնը կատարւում էր յունական կղզիներից մէկի վերայ, տաճկական իշխանութեան օրերում, մեզանից մօտ 500 տարի առաջ։ Խաւար ու բարբարոս ժամանակ էր. ոչ ոք ապահով չէր իւր կեանքի, պատուի ու կալքի համար. վիրաւորում էին մարդու ամենասրբազան զգացմունքները, իսկ ժողովուրդը լռութեամբ ու համբերութեամբ տանում էր այդ բոլորը. ոչ ոք չէր վրճռում թոթափել իրանց վրայ ծանրացած լուծը. հարկաւոր էր մի համարձակ, ուժեղ կամքի և սուրբ զգացմունքների տէր մարդ և այդպիսին առաջ եկաւ. դա Թոմաս Բոցարիսն էր։ Նա նոյնպէս ալրուած ու դաղուած էր տաճիկներից. տաճիկ հարկահաները խաւարեցրին նորա սիրելի մօր վերջին բոպէները, տաճիկ դաղին

քունութեամբ իւր հարեմը տարաւ նորա սրտին ամենամօտիկ անձնաւորութիւնը, նորա միակ քրոջը։ Եւ նա վճռեց իւր վրէժը հանել։ Բայց նա սովորական վրէժառուներից չէր. ուրիշը նորա տեղ կը բաւականանար միմիայն դաղիի սպանուով, այն մարդուն սպանելով, որը անմիջապէս իւր վիրաւորանք էր հասցրել իրան. բայց Թոմասը աւելի հեռ էր տեսնում, նա տեսնում էր, որ իրան հասցրած չարիքի իսկական պատճառը ոչ թէ դաղին կամ հարկահանն է, այլ այն հաստատութիւնը, որը ստեղծել առաջ է բերել դրանց, այն է տաճիկ կառավարութիւնը. հանելով իւր անձնական վրէժը տաճկական կառավարութիւնից, նա դորանով հանում էր և այն հասարակութեան վրէժը, որը այնքան անդամ վիրաւորուած ու անարդած էր այդ իշխանութիւնից. դորանով նա դառնում էր հասարակական վրեժառու, նորա արածը ստանում էր հասարակական նշանակութիւն և ահա ինչու պատմութիւնը այսօր մոռացել է հաղարաւոր ուրիշ վրէժառուներին, բայց պատկառանքով լիշում է Բոցարիսի անունը. Բոցարիսը շրջապատեց իրան համախոհներով, բոլորը պատրաստ էր. հարկաւոր էր չարմար դէպք և չարմար բոպէ, և այդ օրը եկաւ. տարիներով սրտի խորքերում կուտակուած ու մնած անբաւականութիւնը փրթեցաց վառօդի նման. ապստամբութիւնը արագ տարածուեց ամբողջ կղզու վրայ. տաճիկները վռնտուեցան կղզուց և ամի քանի փորձեր եղան տաճիկների կողմից վերականգնացնել իրանց իշխանութիւնը, բայց այդ փորձերը ապարդիւն անցան յոյների կատաղի ընդդիմադրութեան շնորհիւ։ Ազգաբնակութիւնը սկսեց ազատ շունչ քաշել. բայց այդ երկար չը տևեց. երկրի լիաղօր կառավարիչ նշանակուել էր Բոցարիսը. այս բանը դուր չէր գալիս կղզու մեծամեծներին և նրանցից մէկը, սուլթանի խոսաումներից դրդուած, թունաւորեց Բոցարիսին. նորա մահից յետոյ առաջ եկան հինգ վեց կառավարիչներ. դրանցից ամեն մէկը ուզում էր ինքը դլխաւորը լինի. առաջացաւ մի ինքնասպան կռիւ, որից օգուտ քաղելով տաճիկները նորից տիրեցին կղզուն և սրով ու կրակով կղզու մի ծայրից մինչև միւսն անցան։

Դիրքը կորդացում է հետաքրքրութեամբ։ Ինչ վերաբերում է թարգմանութեան լեզուին, նա ազատ չէ թերութիւններից. օրինակ կան ապակի սխալ ոճեր. «շատ դահլայ մի տար» (երես 7)—ասում են դահլայ տանել և ոչ տալ), «ինչ ես երկար գլխիցդ դուրս տալի». պէտք է ասել «ինչ ես գլխիցդ երկար ու բարակ դուրս տալի», և այլն։

Բ.